ՊՈՍՏԱՆԴԵՍ—ՏԱՐԻ—ԹԻՒ—2163—ԵՐԵՔՇԱԲԹԻ—15—ՕԳՈՍՏՈՍ—Ն. Տ.—27—ՕԳՈՍՏՈՍ—1878

ԳԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 Մկ.
» » Գաւառաց » 10 Մկ.
Վեցամսեայ » Կ. Պոլսոյ » 4 Մկ.
» » Գաւառաց » 5 Մկ.
Թանուցման տողը մէկ անգամի համար 3 զուրուշ, երկու անգամի համար 2 զուրուշ, աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կըլլայ։

ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԳԻՆԸ

Դուրս գացած լրագրոց ճանրուծախքը խմբագրութեան վրայ է։

Լրագրոյս վերաբերեալ նամակներ որ և իցէ գրութիւն խմբագիր—Տնօրէնին պիտի ուղղուի։ Ղալաթիա Պանալքճրլար Ճատտէսի թիւ 198։ Նօրատեան։ Մասիսի գրատունը։

Ճանրուծախքը չվճարուած նամակ չընդունուիր։

ՊՈՍՏԱՆԴԵՍՈՒՊՕԼԻՍ 15 ՕԳՈՍՏՈՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հեռագրական լուրերը կը ծանուցանեն թէ Աւստրիացիք Պոսնա-Սերայի մէջ 27 թնդանօթ, բաղում դէնք և ռազմամթերք գտեր են։ Հերսեքի մէջ Եուվանովիչ զօրավարն ապստամբները վանելէ ետև՝ Մօսթարի հարաւային կողմն Սթօլաց քաղաքը պաշարեր է։ Բայց այս յաղթութիւնները Պոսնիան կատարելապէս չեն խաղաղեցներ տակաւին։ Ապըստամբք կիրճերու և ամուր դրից մէջ բաւական ժամանակ կրնան դիմադրել Աւստրիացւոց, և լեռնային պատերազմներ մղել։ Այսպէս, Պոսնիոյ խնդիրը կրնայ առկախ համարուիլ՝ մինչև որ դաւառը բոլորովին խաղաղ։ Բայց ե՞րբ պիտի ըլլայ այս։ Շաբաթներ ու ամիսներ կրնան դիմադրութիւն երկարաձգել։ Պոսնիոյ պէյերն, որք հին աւատական դրութիւնը կը շարունակեն, ժողովուրդն իրենց բոլորովին ստրուկ ըրած էին։ Այսոնք իրենց հողերն ու արտօնութիւնները պահպանելու համար՝ Օսմանեան երկրակալութեան ժամանակ իսլամութիւն ընդունեցին, և ամենէն աւելի մոլեռանդ եղան։ Ցեղութեան հրատարակած հաւասարութեան օրէնքները չճանչցին, և շատ անգամ իրենց արտօնութիւնները պահելու համար ապստամբութիւններ հանեցին։ Եկաւ վերջապէս ժամանակ, որ իրենց բռնաւորական և կեղեքիչ ընթացքն անկարելի էր։ Պոսնիացիք ո՛չ ևս կրնային հանդուրժել այս հարստահարութեանց։ Կը տեսնէին իրենց դրացի Աւստրիոյ և Սերվիոյ ժողովուրդներն, և իրենց վիճակն անոնց վիճակին հետ բաղդատելով՝ չէին կրնար անհոգ տարբերութիւնը չտեսնել։ Այսոր հետ մէկտեղ բռնութիւնն ու սպանութիւնները վերջապէս ապստամբութեան պատճառ եղան և ներկայ վիճակը բերին։ Պոսնիոյ պէյերն այժմ իրենց արտօնութիւնները ղէն 'ի ձեռին կը պաշտպանեն Աւստրիոյ դէմ, բայց իրենց դիմադրութիւնը վաղ կամ ետնագան պիտի ընկճի, և այն ատեն իրենց արտօնութեանց հետ հաւանական է որ կալուածներն ալ ձեռնունն երթան։

* *

Անգլիական Թայմզ լրագրին մէջ կը կարդանք թէ Նարպէյեան եղբարք, իրենց Բեդրասպուրկ նստող հօրեղբօր Լուի տը Լուսինեան արքայազուն իշխանին * իբրև հարազատ ժառանգ, անոր հետ 'ի միասին նամակ մ'ուղղեր են առ Լորտ Սալիսպըրի, և կը ծանուցանեն եղեր թէ իրենք Կիպրոսի Երուսաղէմայ և Հայաստանի թագաւորութեան ժառանգ Լուսինեանց սերունդէն ըլլալով, Կիպրոսի նոր տիրողին՝ Անգղիոյ՝ արդարասիրութեանը կը դիմեն և իրենց արժանաւոր թոշակ մը կը խնդրեն՝ իբրև կղզւոյն հին տէրերուն սերունդին զաւակները։ Միանգամայն միլիոնաւոր ոսկիներու դումար մը կը պահանջեն, զոր իրենց հօրեղբօր Լուի Լուսինեան իշխանին հայրը ժամանակաւ Նիկոմիդիոյ Աթանաս արքեպիսկոպոսին քով աւանդ դրած է եղեր, և 1821 ապրիլ 10 ին Բ. Դուռը գրաւեր է։ Լորտ Սալիսպըրի այս պահանջմանց տակաւին պատասխան չէ տուեր։

* *

Հայաստանի մէջ հարստահարութիւնք անպատիժ կը շարունակեն, և այս անտանելի վիճակին բարւոքման նշան մը դեռ չտեսնուիր։

Մայրաքաղաքիս Մէսէնճիրը անուն Անգլօ-Դպրական լրագրոյն Տրապիզոնի թղթակիցն հետևեալ սրտաճմլիկ տեղեկութիւնները կը գրէ օգոստոս 3/17 թուով.

«Արդէն քանիցս անգամ գրեցի ձեզ Քղի գաւառին քանի մը գիւղաւորներուն գործած անօրէնութիւնները։ Քղի կարինէն 24 ժամ հեռաւորութիւն ունի՝ դէպ 'ի հարաւային արևմուտք՝ Խարբերդ երթալու մեծ ճանբուն վրայ։ Զարմանալի է տեսնել որ այս գաւառին պէյերը կարող կըլլան այսքան երկար ժամանակ իրենց հարստահարիչ ընթացքն անպատիժ շարունակել, բայց առաւել զարմանալի է որ Թէմրանցի Իսմայիլ պէյն ալ Գայմագամ դրուած է այդ գաւառին։ Իւր բռնաւորութիւնն և ընդհանրապէս գործած գործերը պատճառ եղած են Քղիի այժմու սովուն, ինչպէս կը կարծուի։

«Այս գաւառը լեռնոտ է, և վերջին տարիներուն մէջ հասած ցորենը հաղիւ բաւեց տեղւոյն ժողովրդոց։ Գլխաւորապէս անցեալ ամառ հունձքը սակաւ եղած էր, և իմաստուն կառավարիչ մը կանխաւ մեծ հոգ կը տանէր սովու մը հաւանականութեան առաջքն առնելու։ Բայց Իսմայիլ պէյ բոլորովին հակառակը գործեց։ Կառավարութեան տասանորդ ժողված ցորենին մէկ մասը կարին ղրկեց, մնացածն ալ շտեմարանները լցուց՝ զօրաց աննդեանը համար, բայց զօրքերը բնակչաց տունները նստեցուց։ Ասկէ զատ շատ մ'ալ կարագ պանիր և եղիպտացորեն հաւաքելով կարին ղրկեց իբր թէ զօրաց համար։ բայց որովհետև բոլոր ասոնք Իսմայիլ պէյին աներոջը՝ Շերիֆ էֆէնտիի ձեռքէն ու տունէն անցան, այդ նպարաց մեծ մասին կարնոյ բանակն հասնիլը տարակուսելի է։

«Այս նպարաց փոխադրութիւնն ալ բռնութեամբ հարկ կը դրուէր ժողովրդոց վրայ։ Եթէ ամենը 50 գըրաստի բեռ էր, 200 գրաստ կը ժողվէին ժողովրդէն, որոց 150ը նորէն անոնց կը ծախուէր։ Իսկ գրաստ տալու կամ վարձելու կարողութիւն չունեցողները կը պարտաւորուէին իրենք շալկել պարկերն ու մինչև Կարին տանիլ։ բայց խեղճերը ձմրան ցուրտին դէմ լաւ պաշտպանուած չըլլալով, շատը ականջնին ձեռքերնին կամ ոտքերնին սառած կը վերադառնային, ոմանք ալ ճանբան կը մեռնէին։

«Սոյդ է որ այդ բաներուն համար վճարքի պէս բան մը կար, որ բաւական էր կառավարութեան այս արարքն արդարացնելու։ մինչև իսկ մէկ քանիներէն ընկալադիր անդամ առնուած էր, բայց այն ընկալագրերէն դոնե միոյն վճարուած ըլլալը չը կրցաւ ցոյց տրուիլ ինձ։

«Ուստի երբոր ձմեռը վրայ հասաւ, Քղիի գաւառը բոլորովին թշուառութեան մատնուեցաւ։ Միայն Բալուի կողմէն քիչ մը յոյս կար օգնութեան, որ 18 ժամ հեռի է դէպ 'ի հարաւ, բայց ժողովրդեան թշուառութենէն ու բարձրաբերձ լերանց մէջէն ձմեռ ժամանակ մինչև Բալու ճանապարհորդելու դժուարութենէն դատ, հաղիւ տասնին մէկ յոյս կար թէ ցորենի կարաւան մը՝ աւարառու Քրդաց ձեռքը չընկած՝ ողջամբ կրնար Քղի հասնիլ։ Քանի մ'անձինք իրենց յուսահատութենէն Բալու երթալու և ցորեն բերելու փորձ ըրին, այլք իրենց ցանելու ցորենն ուտելէ և սպառելէ ետև, հայի տեղ իրենց կենդանիներն սկսան մորթել ուտել, վերջն ալ արտերնին վաճառել քանի մը շաբաթուան ուտելիքի փոխարէն, ուրիշներ ալ յուսահատութեամբ անօթի մեռնիլ յանձն առին։ Այն միջոցին անդդայ դայմագամն (Իսմայիլ պէյ) իւր ընկերակցաց օժանդակութեամբ չէր դադրեր իւր բռնութիւնները շարունակելէ։ հինգ զաւակաց տէր անկար խեղճ մարդու մ'արտը բռնութեամբ գրաւեց։

«Միւս կողմանէ գաւառին անհընազանդ ցեղերուն ամենքն ալ, Քիւրդք Զէրքէզք և դասալիք զինուորք, անսովոր փութաջանութեամբ ասպատակութեան ելած էին։ Կարինէն Քղի երթալու մեծ ճանբուն վրայ՝ Հիւլէնք անուն յունաբնակ գիւղ մ'աւարի տրուեցաւ, և տեղւոյն առաջին երեւելին՝ որ հարուստ և խիստ հիւրասէր մարդ մ'էր, յետին աղքատութեան վիճակի մէջ ինկաւ, և իրմէ պահանջուած դրամը չկրնալ վճարելուն համար բանտ դրուեցաւ։

«Արեան վէճի պատճառաւ քըրդաբնակ գիւղ մը կրակի տրուեցաւ Թշնամի քրդաց ձեռքէ։ Գիւղին Շէյխը հիմայ մեռակայ խեղճ Հայերը կ'ստիպէ որ գիւղին վերաշինութեան համար պէտք եղած տաղձը տան և անձամբ բերեն։

«Ասոնք քանի մը պարզ օրինակներ են այն բազմաթիւ իրողութիւններէն զոր կրնայի յիշել դաւառիս ժողովրդեան կրած հարստահարութեանց և տառապանաց մասին՝ եթէ ձեր էջերը գրաւելու երկիւղ չունենայի։

«Մէկ երկու ամիս առաջ Կ. Պոլսոյ բողոքական Հայոց ազգապետ Յակոբ էֆէնտին՝ ոյն վիճակին վրայ թերթեւ գաղափար մը տուող տեղեկագիր մը մատուցեր էր Անգղիոյ դեսպան Պ. Հ. Լէյարտի, նա ալ Բ. Դրուռնէն հրաման ղրկել տուաւ գործուած եղեռանց վրայ քննութիւն մը բանալու։ Բայց որովհետև Իսմայիլ պէյ ընտանի եղած է այս տեսակ քննութեանց, և գիտէ ինչ ընթացք պէտք է բռնել, պատրաստուեցաւ։ Բալի Թուրք մը կար Ուլաշ օղլու Հաճի Սիւլէյման անուն, որ այս պէյերուն դէմ բողոքներ և արդարութիւն խնդրեր էր։ Իսմայիլ պէյ գիտնալով որ իրեն դէմ ամենէն զօրաւոր դատախազն այս մարդը պիտի ըլլար, հնարք մը գտնելով զրպարտութեամբ բանտարկել տուաւ Երզնկայի մէջ։ Ուրիշներ ալ, որք կրնային ամբաստանութիւններն հաստատել, Հաճի Սիւլէյմանի բաղդին չվիճակելու համար՝ եա կեցան դատախազ ըլլալէ։ Իսմայիլ պէյ սիրալիր ընդունելութիւն մ'ըրաւ քննիչներուն, փառաւոր կերպիւ հիւրընկալեց, և վերջապէս յաջողեցաւ համոզել թէ սխալ տեղեկութիւն արուեր էր իրենց։ Սակայն կարծեմ թէ վերոյիշեալ խեղճ անկարին արտն իրեն ետ դարձնել տուեր են. բայց այդ խորամանդ Իսմայիլ պէյը տակաւին պաշտօնի վրայ է։ Ոճիրք անպատիժ կը մնան և ժողովուրդը սրտատանջ կ'սպասէ թէ ի՞նչ պիտի ըլլայ ապագայն։

«Քանի մը շաբաթ առաջ յանձնաժողով մը, որոյ անդամք էին Սապիթ փաշա, Այի Շէֆիկ պէյ և Կիրակոս էֆէնտի Գաղանճեան, Տրապիզոնէն անցան երթալ Ներսերը Քըրդաց ասպատակութեանց խնդիրը քննելու։ Թերևս կարենան բան մ'ընել Քղիի դժբաղդ ժողովրդոց համար։ Բայց տարին այսպէս 12 յանձնաժողով ալ ղրկուելու ըլլայ, բան մը չեն կրնար ընել, մինչև որ ասոնց ամենուն դէմ պ-բ-ի-ա-ղ-ա-ն-ա-ա-ր-ք չդրուին։»

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ոսկուպա 25 օգոստ.

Ներսէն եկած լուրերն Այպանիացւոյ

* Բեդրասպուրկի մէջ Բարձրապատիւ արքայազուն իշխան, կամ Արքայական Բարձրութիւն տիտղոսը կը կրէ պաշտօնապէս։

և Սերբաց միջև թշնամութիւն նախատեսել կուտան։

Փարիզ 23 օգոստ.

Թան լրագիրը կը հաստատէ թէ Բրէտ–Ֆոնտիէ Պանքային երկու դեր–կառավարիչները պիտի փոխուին։

Թանձէր 23 օգոստ.

Մարոկի կայսրը թանաւորելու փորձ մ'ըլլալով, ազրութեան գլուխներն ու նախարարները բանտարկեցան։ Անիշխանութիւնը կատարեալ է։

Վիէննա 24 օգոստ.

Պաշտօնական լուրեր կը ծանուցանեն թէ Սթօլացի առջև վճռական կռիւներ եղեր են։ Հէրսէգի ապստամբք ցիրուցան եղեր են. հետևաբար Հէրսէգի մէջ ապստամբութիւնը հրջանալու վրայ կը նկատուի։

Լոնտրա 24 օգոստ.

Տէյլի Նիւս կը ծանուցանէ թէ Պ. Տէլիեանիի յիշատակագրին ի պատասխան Բ. Դրան հանած չրջաբերականը Լոնտրա հասաւ։

Նոյն լրագիրը կըսէ թէ Օսմանեան կառավարութիւնը կը հանի Պաթումը Ռուսաց յանձնել, բայց սահմանագլխոց ուղղութեան համար Յունաստանի հետ բանակցութեան մանել յանձն չառնուր։

Գահիրէ 24 օգոստ.

Խեդիվը իւր ընդունած բարենորոգումները գործադրելու սահմանեալ նախարարութիւն մը կազմելու գործը Նուբար փաշային յանձնեց։

Զրոյց կը պտըտի թէ Խեդիվը նախարարական պատասխանատուութիւն պիտի հրատարակէ։

Լոնտրա 24 օգոստ.

Կը հաստատեն թէ հինգ միլիոն Անգլերայի Օսմ. փոխառութիւն մը կը պատրաստուի Անգլիոյ երաշխաւորութեան ներքև, որ Փոքր Ասիոյ ելումուտքը կապմաւորելու գործն իւր վրայ առած է։

Վիէննա 24 օգոստ.

Ապստամբները ծանր հարուած մը կրեցին Սթօլացի առջև։ Իրենց բոլոր գլուխներն սպաննուեցան։

Գերմանիոյ կայսրն այսօր Կասթէյն հասաւ։

Գահիրէ 24 օգոստ.

Խեդիվը այսօր Պ. Վիլսոնն ընդունելով ըսաւ անոր թէ քննութեան եզրակացութիւնները սրտի մասք պիտի գործադրէ. հին սխալանքը մէկդի թողլով նոր դրութիւն մը պիտի ընդունի. նախարարական անկախութիւն սահմանած էր, որ կառավարական ձեւին մէջ արմատական փոփոխութիւն մ'ընելու սկզբնակէտ մը պիտի ըլլայ, և որ քննիչ յանձնաժողովոյ եզրակացութեանց գործադրութեան երաշխաւորութիւնն է։

Քննիչ յանձնաժողովոյ եզրակացութիւնքն հետևեալներն են.

Առանց յատուկ օրինաց բնաւ հարկ չհաւաքուի։

Օրէնդիր իշխանութիւն մը սահմանուի, հարկերը քննելով քուէարկելու համար, որք թէ՛ բնիկ ժողովրդոց և թէ՛ օտարազգեաց համար հաւասարապէս գործադրելի ըլլան։

Պահեստի դրամագլուխ մը սահմանուի Նեղոսի ամման անբաւականութենէն ծագելիք բացը դոցելու համար։

Դատական առեաններ սահմանուին հարկաց վերաբերեալ բողոքները քննելու համար։

Կալուածական կամ հողային հարկը վերաքննուի։

Տարապարհակ աշխատութիւնները ջընջուին։

Զինուորական ծառայութիւնը կանոնաւորի։

Վերջապէս Խեդիվը իւր բոլոր հողերն ու անշարժ կալուածները դանձուն բացը գոցելու նուիրէ։

Թունուզ 24 օգոստ.

Դատական գործոց նախարարն առաջին և արտաքին գործոց նախարար անուանեցաւ փոխանակ Մոհամէտ Խազնատարին, որ հրաժարական տուաւ։

Փարիզ 25 օգոստ.

Մաք–Մահոն մարաջախտին հրաժարման և նախարարաց փոփոխութեան զրոյցները սուտ կը հանուին։

Ճիպրալթար 25 օգոստ.

Քօլէրային պատճառաւ Մարոկէն եկող ճանապարհորդք և վաճառք քառասնամեայ ենթարկեցան։

Այս տողերս հասած հեռագրէ

Զէմինէ 26 օգոստ.

Գարատաղի իշխանն հրաման ըրաւ որ Սթօլացի առջև յաղթուելով Գարատաղի հողը փախչող ապստամբները Նիբոլչի մէջ վար դրուին։

Լոնտրա 26 օգոստ.

Թայմզ լրագիրը Կալկաթայէն հեռագիր մը կը հրատարակէ ծանուցանող թէ Հնդկաստանի Անգղիական կառավարութիւնն սպառնացեր է Աֆղանստանի Էմիրին, որ եթէ իւր թշնամական դրից մէջ յարատևէ, իւր հիւսիսային–արևմտեան սահմաններն ուղղել հարկ պիտի ըլլայ։

Նոյն լրագրին Բեղրասրուրկէն առած մէկ հեռագիրն ալ կը ծանուցանէ թէ Ռուսիոյ կառավարութիւնը ծանուցագիր մը զրկեր է Ռումանիոյ կառավարութեան, որպէս զի Պեսարաբիան իրեն յանձնէ։

Լոնտրա 26 օգոստ.

Օսմ. Քոնս.		13 1/2
Փոխ.	1865	18 1/2
»	1869	17 1/8
»	1871	52 1/4
»	1872	25
»	1873	15 1/4
» Եգիպտ.		75 1/8
Անգղ. Քոնս		94 11/16

Փարիզ 26 օգոստ.

Օսմ. Քոնս. 13,55

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսական զօրաց Ռուսաստան վերադառնալուն գործը կը շարունակէ։

Երէկ և առջի օրն հինգ մեծ շոգենաւ Այսթէֆանոսէն Սև ծովը նացին Ռուսաց կայսերական պահապան զօրքերը փոխադրելով։

Պուլղարիոյ առժամանակեայ կառավարիչ Տոնտուքոֆ–Քորսակոֆ իշխանն ուրբաթ օրը Կ. Պոլիս եկաւ։

Կըսուի թէ Ռուսաստանի ազգութեան պատճառները քննող յանձնաժողովին դէմ բողոքելու եկած է, առարկելով թէ այն քննութիւնները Ռուսաց զինուորական իշխանութեանց դէմ սուտ և զրպարտական տեղեկութեանց վրայ հիմնեալ են։

Պէրլինի Օսմ. նախորդ դեսպան Արիստարքի պէյ Կ. Պոլիս եկաւ։

Թղթադրամաց բարձման յանձնաժողովոյն հասութից գումարը 18,654,644 ղրշի հասած է մինչև 12 օգոստոս շաբաթ օրը։

Այս գումարին 500,000 ղրշը գառառաց մէջ հաւաքուած հասոյթներուն արդիւնքն է։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ԷՍՀԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

14 օգոստ. երկուշաբթի իրիկուն		14,30
15 օգոստ. երեքշաբթի առաւօտ բացուեցաւ		14,35
կէս օրին		14,12
Բուռլիի երկաթուղի	Փր.	58 25
Թղթադրամ	Լիր.	300

ԸՆԹԱՑԵՐ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Կ. Պոլիս 14 Օգոստոս

Սոսիէթէ Ժէնէրալի բաժ.	Անգղ. լիր.	4,10
» Փոխանակութեան	»	3,30
Կ. Պոլսոյ Պանքային	»	6,15
Քրէտի Ժէնէրալ	»	5,22
Քրէտի Օսթրօ–Թիւրք	»	—
Փոխ. 1863	Ֆր.	73
» 1865	»	85
» 1869	»	83
» 1872	»	26
» 1873	»	77
Թրամուայ	Օսմ. լիր.	1 50

ԱՅՊԱՅԻՆ

Ազգ. Նորընտիր կրօն. ժողովն ուրբաթ օրը գումարեցաւ ի Պատրիարքարան ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք հօր և իւր դիւանը կազմից՝ Ա. Առենապետ ընտրելով Ամեն. Խրիմեան սրբազան և Բ. Առենապետ Գէր. Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան։

Հաճինէն Ազգ. Պատրիարքարան եկած հեռագիրք խիստ տխուր նըկարագիր մը կուտան այն կողմերը ցրուած Զէյքէգներուն, Ամշարներուն և Բիւրգերուն դրծած ապստամբութեանց և աւազակութեանց վրայ, այնպէս որ նոյն իսկ քաղաքն յիշեալ բարբարոսներէն դրեթէ պաշարուեր է, և ճանրայներուն հաղորդակցութիւնները խափանուեր են։

Ս. Պատրիարք Հայրն այս անհանդուրժելի վիճակին արագ վերջ մը տրուելու համար թագրիր դրեց առ Բ. Դուռն։

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Այսէր երկու տարի առաջ, 1876 ապրիլ 15 ին, այս անունով ընկերութիւն մը հաստատուած էր մայրաքաղաքիս մէջ նախաձեռնութեամբ քանի մ'ուսումնասէր երիտասարդաց, Հայաստանի մէջ ճրիագէս ուսում ծաւալելու ազնիւ նպատակաւ։

Այս անգամ յիշեալ ընկերութեան 1877–1878 տարւոյն տեղեկագիրը ձեռքերնիս հասնելով, ուրախութեամբ տեսանք որ յիշեալ օգտաւէտ ընկերութիւնն իւր հիմնադիր անդամաց անխոնջ վուութեանամբ բաւական ընդարձակութիւն գտեր, և իւր երկրորդ տարւոյն մէջ 1877 ապրիլ 15, 28234 1/2 ղրշի հասոյթ ունեցեր է բաժանորդութիւններէ և նուէրներէ, մինչդեռ նախընթաց տարին հազիւ 10101 3/4 հասոյթ ունեցած էր։

Գալով իւր նպատակին գործադրութեան, առ այժմ վանայ Աղիւր գիւղին մէջ Արարատեան անուն վարժարանի մը խնամարկութիւնն ստանձնած է, որով 200 ի չափ աշակերտք և աշակերտուհիք կանոնաւոր կըրթութիւն կստանան, և չափահասանձանց համար ալ դիշերային և կիրակնօրեայ դասախօսութիւնք կըլլան։

Ընկերութիւնն իւր գործողութեանց սահմանն առաւել ընդարձակելու դիտաւորութիւն և փափաք ունէր, բայց վերջին պատերազմն և այն առթիւ Հայաստանի մէջ գործուած ապստամբութիւններն արգելք եղան իրեն։

Կը մաղթենք որ այս ազգօգուտ ընկերութեան նման ընկերութիւնք շատնան ազգիս մէջ, մանաւանդ այսուհետև, ուր կրթութեան և յառաջդիմութեան պէտքն ամեն ժամանակէ աւելի զգալի եղած է և պիտի ըլլայ Հայաստանի մէջ։

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹ

Այն մակագրով Տփխիսի մէջ հրատարակել սկսած ամսագրոյ մ'առաջին թիւն ստացանք այս շաբթու։

Այս նոր պարբերականն, որոյ Տէր և խմբագիրն է Մեծարգոյ Պ. Յակոբ Տէր Յօհաննէսեան, ազգային հրատարակագրութեան ամենակարեւոր պակասներէն մին կը լցնէ, այն է դաստիարակութեան, կամ որ նոյն է՝ ուսումնական և դպրոցական խնդրոց նուիրեալ թերթի մը պակասութիւնը։ Կը մաղթենք որ ըստ արժանւոյն քաջալերութիւն գտնելով յաջողի օգտակար ծառայութիւններ մատուցանել ազգին։

Տարեկան գինն է 12 ամսատետրի համար 6 ռուպլի։

Տփխիսի Մեղու Հայաստանի լրագրոյն յուլիս 15 թերթին մէջ հետևեալ ազգասիրական կարևոր տեղեկութիւնը կրկարդանք Աղեքսանդրապօլէն գրուած.

«Ամսոյս (յունիսի) 26ին ընկերաց հետ Անի Բագրատունեաց մայրաքաղաքն երթալոյ բաղդն ունեցայ, ուր 1873 թուին տեսնելէս յետոյ տակաւին գնացած չէի։ Այս անգամ այն կիսաւեր քաղաքը գտայ աւելի կործանուած։ Պարսպին շատ տեղերն անորոշելի կերպով անհետացած թըշուառ գրութեան մէջ էին. որոյ մասին մանրամասնաբար գրելս կը թողում ապագային։

«Գիշերելու Ղօշվանք անուն գիւղը գնացինք, որ Անիէն հազիւ վեց վերստ հեռաւորութիւն ունի, 15 տուն հայ բնակիչներէ բաղկացեալ. տեղոյն վանահայր Յակոբանոս վարդապետն ամենայն ուրախութեամբ վանքի հանդէպ ուխտաւորաց սենեակների մէկին մէջ ընդունեց մեզ։ Այն ծերունին՝ որ ժամակոչ անունը իրրև սարին ծառայութեան անուն իւրմէ խպառ մերժելով հպարտութեամբ «աս վանքին միաբանն եմ» կ'ասէր, այս անգամ ևս նոյն միաբանութեան վեհ պաշտօնին մէջ գտայ, և յիշելով 1873 տարին հարցի. «Տիրացո՛ւ միաբան, արդեօք Բուրդեր. նոյն դրութեան մէ՞ջ են, որ Ցաճիկ գինուորաց հետ իմև ընկերոջս վերայ յարձակուելով Անիէն մինչև Ղօշվանք փախցրին, որ քոև երեք ռուբլիս բարեխօսութեամբ հազիւ թէ ծեծվելու և իցէ թէ կողոպտուելու ազատուել կարողացանք։—Ոչ, պատասխանեց ծերունին, մի հպարտ ժպիտով, այժմ գայլը գառի է փոխադրուել. անիծուածները վանքը քանդեցին. ամեն ինչ մեզանէ կը յափշտակէին. անցեալ տարի Մուխթարին այս կողմեր եղած ժամանակ, վարդապետին հետ չոր հացով էինք կերակրվում, որ երթևեկ գօրքին ոչխարի միս, մածուն և այլն ուտեցընել կարողանանք...։

«Այն սոսկալի անցեալը յիշելու հարկ չկայ, ընդհատեց վարդապետը, որ ժամակոչին խօսքերին ներկայ էր. այն օրէն երբ Ռուսաց զօրքը յաղթութեամբ Ղարս մտաւ, ես ալ Բրդաց վերայ իշխել սկսայ. այն ամեն վանքապատկան հողեր, որ անօրէնը բռնութեամբ սեպհականել էր, այժմ վերադարձնելոյ ստիպած եմ. վանքին չրջապատող ամեն կեղտոտութիւնք, հող, քար և այլն, գիւղերից իրրև բէկեար հաւաքած Բուրդ մշակների միջոցաւ մաքրել եմ։

«Արիւնարբու Բուրդը՝ այժմ Հայի սարսափից խպառ ղէնք վար դրած է. այս կողմեր՝ որ իրրև երկու տէրութեանց սահմանագլուխ՝ աւազակաց և փախստականաց բնակարան էր, ուր երբեմն 5–10 ձիաւոր Անին մտնել երկիւղալի էր, այսօր փոքրիկ մանուկներ չրջելու կելլեն, և պատահմամբ աւերակաց մէջ կը գիշերեն»։ Բայց ի՞նչ որտանէ, հայը սուրբը հազարդեց մեզ և այն ուրախութիւնը լուրը, որ գեներալ Պոպկոյի (Ղարսի նահանգապետ) հրամանաւ Անւոյ կամուրջին եկեղեցին նորոգուելու է, որոյ համար մօտ օրերս Պոպկոյի բացած սարադրութեամբ Աղեքսանդրապոլ, Թիֆլիզ և այլ շատ հայաբակ քաղաքներ ինքն փող հաւաքելու պիտի չրջի. անկասկած եմ որ այսպիսի մի բարի գործի ամեն մի Հայ իւր կարիքի չափ օգնութիւն ցոյց տալ խնայելու չէ։

«Հռոմմոսի (ՂՀշավանքի) վանքին կից է Բագրատունի թագաւորաց դամբարանը, նախարարաց առանձին խորհրդակցութեան տեղը իւր երկու սպասաց և հասարակաց բանդերով, որ այժմ Ղարասոյ առաջնորդ Գրիգոր վարդապետի հրամանաւ աւերեալ ինելոյ է։

«Սխաբեանի (Աբփաչայ) եղբը ձորակի մէջ կառուցեալ վանքին արևելեան կողմը ամփոփուած է Աշոտոյ մարմինը, զոր կը հաստատէ շիրմին «Աշոտ թագաւոր» արձանագիրը. սակայն առանց ոչոքի հայեցողութեան աւելի անմաքուր դրութեան մէջ գտայ։

«ՂՀշավանքի և Անիի մէջ տեղ կիսաւեր կանգնած են երկու գմբեթաւոր շինութիւնք, բայց ոչ եկեղեցի, իրարից երկու սաժէն հեռու քարեայ կամարով միացած. սա զանգակատուն է եղել Անիոյ ՂՀշավանքի, Հայ նախարարներն և թագաւորը դատաստանատուն հրաւիրելու։ Սոցա վերաբերութեամբ իմ հարցմանս վարդապետը պատասխանեց. «Որդի, սոքա «ՂՀշ» անուն վանքերն են միմեանց կից։» Այս խօսքը շատ սխալ էր, և տասնեակ տարիներով մէջը ճգնող վարդապետի մ'այսպիսի սխալ տեղեկութիւն հաղորդելն աննեղելի։

«Աշոտոյ դատեր բաղանիքն, որ Աւոյ պարսպին մէջ պալատին ձախ կողմն կընկնի, ամեն այցելու վարդապետաց ցուցմամբ իբրև եկեղեցի ընդունուած է, որ մեզ նոյնպէս (և այսպիսի շատ անհիմն տեղեկութիւններ) հաղորդեց այն օր Անի գանվող սարկաւագը։ Այս ամեն սխալն անշուշտ են.ք որ պիտի ուղղէ այժմեան ժամանակն, ուր այլ չեն տեսնուիր արնեգոյն ֆէսեր, և ոչ Քուրդը Դայլի դէմքով։ Ներկայումս մարդիկ կարող են ամիսներով մնալ և ամեն ինչ մի առ մի գնել։

«Մեզ այժմ անհրաժեշտ է ունենալ Անին բոլորովին հիմնայատակ կործանելուց ազատ պահելու համար պահապաններ, և այդ պահապանները կը լինին կաթուղիկէ եկեղեցին նորոգուելուց զկնի նորա միաբանութիւնը։»

Հետևեալ նամակին հրատարակութիւնը կը խնդրուի մեր անկողմնապիրութենէն.

. . . Խմբագիր.

Պատուական Մասիսի օգոստոս 3 թուականը կրող թերթին մէջ Օրատէն 'ի Պատրիարքարան ուղղեալ հանրագրութեան մը օրինակը կարդալով շատ զարմացայ, յուշ ածելով թէ՝ կարգ մը դատարկաշրջիկ սինքորներ ստութեան միջոցաւ տակաւին մեծ գեր կը խաղան մեր ազգին մէջ։ Յաւալ՛ ազգ, միթէ կարո՞ղ ես յառաջդիմութեան մեծ խնդիրդ յաջողցնել՝ քանի որ մի քանի խառնակիչք կը յանդգնին կառավարութիւն մը, թաղական մը, ժողովականներ, առաջնորդ մը և ազգին բարերար մը յանիրաւի զրպարտել, իրար խառնել, կուսակցութիւններ յարուցանել, Պատրիարքարան մը խաբել և խմբագրի մը ուշադրութիւնը գրաւել. ո՛ւր էր թէ ձեռնհաս իշխանութիւն մը ունենայինք՝ որ այս տեսակ խնդիրները նուրբ քննութեան առնէր՝ և յանցաւորին արժանի պատիժը տնօրինէր. այո՛, վստահաբար կըսեմ, եթէ Պատրիարքարանը գիշանի սա հանրագրութիւն անուանեալ ստութեանց և զրպարտութեանց շարքին հեղինակները խուզարկել, նոյն ստորագրութեանց շատերն էութիւն չունեցող լոկ անուններ պիտի գտնայ, և գտելով զանոնք պիտի տեսնայ միայն երկու կամ երեք հատ Բագոսեան գաւակներ, որք յօժարութեամբ կընդունին բանալ՝ ձրիբնակարան և ձրի հաց ունենալու համար։ Պոմպոնիի գաւակներէն աւելի Ջերմեռանդը եղող քրիստոնէութեան այս կարծէցեալ պաշտպաններն՝ դրիչ 'ի ձեռին և 'զիսակ 'ի գէմս, իրենց առաջին ստղէն կ'սկսին ինքզինքնին մատնել խաչոր սաւով մը՝ ըսելով թէ. «Անդրէասեանը շատ ապաշնորհով և թախանձանօք իւր քանի ըստպատաւոր կաանէ այն ինչ որը ապջիին իրրև գաւակ» ևն. մինչդեռ դիչ մը վերջը գարձեալ իրենք կը խոստովանին թէ «չատ մը ազգաց ընտանի քներ սոխպեալ են հարուստներուն տունը սպասաւորել». ուրեմն ապաշնաց և թախանձանաց պէտք չկայ Արտաւի մէջ սպասաւոր մը գտնելու համար. մանաւանդ որ Անդրէասեանը 10ՀՆ աւելի արու և էգ գաւակներ ունենալով, որը ապջիկ մը իրրև գաւակ ընդունելու պէտք չունէր։

Զեմ ըսեր թէ եղած պատմութիւնը բոլորովին անհիմն է, այլ պատահած է դէպք մը՝ ինչպէս ամեն ուրեք կը պատահի. ապջիկ մը յղացած է և ժամանակէն առաջ մեռեալ մանուկ մը ծնած է, այդ մանուկը ծովեզերքէն կը գտնուի և չգիտցուիր թէ որո՛ւ միջոցաւ հոն ձգուած է. և ըստ որում այդ ապջիկը Անդրէասեանց սպասուհին կը գտնուի՝ ամենայն հաւանականութիւն կասկած կը յարուցանէ Գալուստին վրայ. խեղճ տղան կը բանտարկուի մի քանի օր և քննութիւններ կըլլան։ Այս պատեհութենէն տոհթ քաղելով ոմանք 'ի չարագործաց կը տարածեն և կը բազմապատկեն, և Անդրէասեան զերդաստանին բազմամեայ պատիւն յարգանքն ու պատկառանքն ապտոտել կը ջանան. այս միջոցին Թրապիզոնէն առաջնորդ հայր սուրբը կը հրաւիրուի, կուգայ նա, և եղելութիւնն արդարապէս քննելով նոյն իսկ ապջկան ազատ խոստովանութեամբը կ'ստուգէ որ այդ յղութիւնը ուրիշէ մ'է, և այդ ուրիշն է մեռեալ մանուկը ծովը ձգողը. հետևաբար Գալուստ բանտէն կազատի, և ապջիկը օրինաւոր պտակաւ կամուսնացուի, և Անդրէասեան կը յօժարի մանաւոր օժիտ մը տալ նմա՝ 'ի վարձատրութիւն իւր ծառայութեանց. տակէ վերջը ամեն բան կը վերջանայ. բայց մեր ջերմեռանդ քրիստոնեայ ախպարները (բողոքական են) այս խնդրոյն մէջ տակաւին իրենց պաշտօնը վերջացած չհամարելով՝ ջուրը պղտորել կուզեն ձուկ որսալու համար. բայց 'ի զուր. իրենց գիշատիչ ակռաներէն պաշտպանուելու համար Անդրէասեանը բաւական կը համարի արհամարհոտ նայուածք մը և դաւազանի թեթև շարժում մը. խեղճերը թող չկարծեն թէ խարտոցէն արիւն հանած են, այլ իրենց լեզուին արիւնն է որ կը ծծեն. թող կրծեն տակաւին մինչև որ լեզուներն բոլորովին մաշի. այս կարգի անձինք աւելի լաւ կընեն եթէ առաջ բերանին լուան և ապա Անդրէասեան անունը արատաներեն, այն Անդրէասեանը որ իւր ամբողջ կեանքը նուիրած է ազգին յառաջդիմութեան, նեցուկ եղած է Օրատուի Մովսիսեան վարժարանի յարատև կանգման. իւր ազգին պատիւն և Հայաստանեայց ուղղափառ եկեղեցւոյ փառքը պաշտպանած է օտար յարձակումներու դէմ. իւր ազգին խեղճերը միշտ մխիթարած է բանիւ թէ գործով, և բարերարութիւնը իւր առաջին պարտականութիւններէն մին համարած է. զայս կը ճանչնան բոլոր Օրատուցիք, նաև օտարազգիք և շրջակայ քաղաքացիք, միթէ կրնա՞ն ուրանալ մեր քրիստոնեայ ախպարները. բայց Անդրէասեանը ոմանց պէս փառամոլ չըլլալով՝ իւր անունը գովեստիւ հրատարակել տալէ կ'զգուշանար, և միայն իւր բարի ըզգացումները և խղճմտանքը գոհացնելով կը բաւականանար։

Խնդալս չի կրցայ զսպել՝ երբ կարդացի հրատարակեալ հանրագրին այն կտորը որ կըսէ. «Առաջնորդը սաստիկ զայրոյթով վրանին յարձակեցաւ (արդարութիւն պահանջող հասարակութեան՝ վրայ), և օրէնքնուն ու կրօնքնուն նախատալից յիշոցներ ընելով՝ լաւ մը ծեծեց և հրամայեց որ բանտարկուին, բայց գթասիրտ աղաներէն ոմանք Հայրսուրբին ձեռքն ու ոտքն իյնալով բանտէն ազատեցին և դուրս վանտեցին զանոնք ևն»։ Ահա՛ հասարակութիւնը որ կը ծեծուի կը նախատուի կը բանտուի և կարող չըլլար իւր իրաւունքը պաշտպանելու, հասարակութիւնը՝ որ իրեն եղած նախատանաց հատուցում պահանջելու համար չէ կրցած արդարութեան դիմել՝ և միայն սատյոգ հանրագրութեամբ մը բաւականացած է. փառն դի այդ հասարակութիւն անուանելը մի քանի սրիկաներու խումբ մ'է. փառն դի այդ խումբը եթէ արդարութեան դիմէր՝ դիտէր որ արդարութիւնը նոյն դիրքը պիտի պատժէր. բայց այդ խումբը բաւական հեռատես գտնուած է՝ ամբաստանելով նաև կառավարութիւնը, որպէս զի կառավարութեան դիմած չըլլալուն պատճառն ինքնին բացատրուած ըլլայ. սակայն ոչ Առաջնորդ հայրսուրբը այդպիսի անհեղեղ գործողութեան մէջ գտնուած է և ոչ ալ կառավարութիւնը զայն պաշտպանած է։ Յաւալին այս է որ բոլոր այդ ստութեանց մէջէն ճշմարտութիւն մը միայն կը ցայտէ՝ այն է՝ այս խմբին դատարկապորտ սրիկայից ընկերութիւն մ'ըլլալը. շարժեր որ այս կարգի մարդոց իրենց արժանիքէն աւելի կարևորութիւն տալով՝ աւելի երկարենք խօսքերնիս. վասն զի ասոնք այն տեսակ մարդիկներէն են, որոնք նախատինքը պատիւ, լրբութիւնը փառք և ծեծուիլը մրցանակ կը համարին. որչափ աւելի նախատես՝ այնչափ աւելի կուրախանան, վասն զի իրենց կարևորութիւն տրուած և ուշադրութիւն դրաւած կը համարին. ուստի մենք կը լռենք՝ բացարձակապէս խոստովանելով որ՝ Անդրէասեանը իրաւամբ կրնայ պարծիլ պաշտպանուած ըլլալով Կառավարութենէն, Առաջնորդէն, Թաղականներէն, Ժողովականներէն և գիտասիրտ աղաներէն, այ ո՛վ կընայ քաղաքին մէջ, խումբ մը որ արդարութեան պաշտպան կանգնած է՝ ընդդէմ գրեթէ ամբողջ քաղաքացւոց և կառավարութեան անիրաւութեանց. սոցա կը մնայ իրենց հարուածեալ պատիւն ուղղել և արժանաւոր հատուցում պահանջել առ որ անկ է. և կը յուսամք որ այս մասին անտարբեր չպիտի մնան թաղականք, ժողովականք, առաջնորդ, կառավարութիւն, աղաներ ևն։

. . . Խմբագիր՝ ես որ 'ի մօտոյ կը ճանչնամ թէ՝ Օրատուի մէջ պատահած այս դէպքը, թէ՝ Օրատուի արդարարէր մասը՝ թէ Առաջնորդ հայրսուրբը, և թէ՝ այդ յոսի խմբակը, յանուն արդարութեան և 'ի խղճմտանաց դրդեալ՝ կաղաչեմ որ ներկայս տեղի չնորհէք ձեր պատուական Մասիսի մօտակայ թերթերէն միոյն մէջ, և եթէ կարելի է՝ ձեր դեռաղուութիւնն ալ յաւելցնէք այնմ, որով կացուցանէք չնորհապարտ ձեզ համայն արդարասէր ժողովուրդն Օրատուի. և ես մնամ մեծաւ յարգանաք . . .

10 օգոստոս 1878 . . .
Կ. Պոլիս

ՆՕՏԵՍԻՑՈՒՄ

ՏՈՔԹՈՐ Տ. ԱՃԷՄԵԱՆ, քանի տարիներ Վիէննայի մէջ մանաւորապէս ակնաբուժութիւն ուսանելէ ետև՝ Կ. Պոլիս վերադառնալով, շաբաթն երեք օր, այն է երկուշաբթի, չորեքշաբթի ու շաբաթի օրերը ժամ 7 1/2 էն 10 1/2 Պահճէ գաբու Թրամվայ ճատտէսի փողոցը թիւ 18 Մէրամէթճեան էֆէնտիի դեղարանն ալ հիւանդութեանց կը նայի։ 2

ԻԼԱՆ

Ասաքիրի շահանէ իշուն միւպայեա ոլընաճաք օլան սէքիզ պին չուվալ իշիւնճիւ նիւմէրօ իսթանպօլ տաքիքինին իշ պին չուվալը թարիխի քարարտա հէման, վէ իշ պին չուվալը տախի թարիխի քարարտան իթիպարէն օն պէշ կիւն միրուրինտէ, քուսուր իքի պին չուվալը տախի անտէն պիր հաֆթա միրուրինտէ Այաղմա տէկիրմէնի իսկէլէսինտէ մաղունայա թէսլիմ օլընճայա քատար վուղ ու պուլանաք քեաֆֆէի մէսարիֆի միւթէահիւտէ այիտ օլուպ բուլ ըէսմի իլէ մաղունա իւճրէթի մաղունատան իխրաճիյէսի նիզամիյէ խաղինէսինէ բաճի պուլունմաք վէ պէհէր չուվալը թամ ալթմըշ քըրէ կէլմէք վէ կամանը լիրայի Օսմանի նիւզ ղրշ հիսապը իլէ մաքպուղ սէնէտինին վիրուտի իլէ մուամէլէսինին խիթամընտա հէման նիզամիյէ խաղինէսինտէն վէրիլմէք շարթը վէ շէրայիթը սայիրէի միւթէֆէրիսը իլէ պէհէր չուվալը եանի ալթմըշ քըրէսի նիւզ ղրշա թալիպի էօհտէսինտէ օլուպ ադօսթօս բումինին օն եէտինճի փէնշէնպիհ կիւնիւ քարարը գամիսի վէրիլէճէյինտէն, իթասընա թալիպ օլանլարընն եէվմի մէգքիւրտէ Տարը Շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի։

14 ադօսթօս 1878

Պապը Սէրասքէրի

Նիզամիյէ էլպիսէ անպարը իշուն միւպայեա օլընաճաք իւչ պին թօփ Մահուտի Ամէրիքան պէզի թարիխի քօնթրաթօտա հէման վէ քեամիլէն թէսլիմ օլընմաք վէ թէսլիմինի միւպէյյին մաքպուզ սէնէտինին վիրուտինտէ էմանը սիմ մէճիտիյէ իկիրմի ղրշ հիսապը իլէ ալիսի հէման վէ սալիսանի իկիրմի պիր կիւն ֆասլը իքի թաքսիթ իլէ նիզամիյէ խաղինէսինտէն վէրիլմէք շարթը վէ շէրայիթը սայիրէի միւթէֆէրիսը իլէ պէհէր թ։փը օմուզ ալթմը ղրշա թալիպի էօհտէսինտէ օլուպ ադօսթօս բումինին օն եէտէնճի փէնշէնպիհ կիւնիւ քարարը գամիսի վէրիլէճէյինտէն, իթասընա թալիպ օլանլարընն եէվմի մէգքիւրտէ Տարը Շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի։

14 ադօսթօս 1878

Պապը Սէրասքէրի

Նիզամիյէ էլպիսէ անպարը իշուն միւպայեա օլընաճաք օլան եէտի պին պէշ եիւզ թօփտան սէքիզ պին թօփա քատար օն իքի լիպրալը Ամէրիքան պէզի թարիխի քօնթրաթօտան իթիպարէն օն իքի կիւնտէն օն պէշ կիւնէ քատար թէսլիմ օլընմաք վէ թէսլիմինի միւպէյյին մաքպուզընընն վիրուտինտէ էմանը սիմ մէճիտ իլէ իկիրմի ղրշ հիսապը իլէ նըսֆը հէման նիզամիյէ վէ նըսֆը տիկէրի խաղինէի մէգքիւրէնին վիրէպիլէճէյի մահալատէն հէվալէթէն թէսվիյէ վէ իթա օլընմաք շարթը վէ շէրայիթը սայիրէի միւթէֆէրիսը իլէ պէհէր թօփը ալթմըշ ղրշա թալիպի էօհտէս նատ օլուպ իշպու ադօսթօս բումինին օն եէտէնճի փէնշէնպիհ կիւնիւ քարարը գամիսի վէրիլէճէյինտէն, իթասընա թալիպ օլանլարընն եէվմի մէգքիւրտէ Տարը Շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի։

14 ադօսթօս 1878.

Պապը Սէրասքէրի

Մէքթաբը միւթէահիտի Ապաիլ Բահիմ ադանին Մարբիքէյ իտարէի ասքէրիյէսինտէ տօքսան իշ սէնէսի շուպաթընն իկիրմի սէօրաբէնճի կիւնիւնտէն տօքսան տէօրթ սէնէսի մարթընն պէշինճի կիւնիւնէ քատար իսթիխատամ օլընան էլլի բէս իլէ իսթիխատամ օլընմայաճաղը քէնարսինէ խատպէր վէրիլէն էլլի տօքուզ բէս քի ճէմանն եիւզ տօքուզ բէս հայվանընն իճրէթի հադդ ընտա իտարէի մէգքիւրէսէն վէրիլմիշ օլան մաղպաթա զայ օլտուղընտան, մէգքիւր մաղպաթա պատէնու զատ հաբ իսէ ամէլ ու իթիպար օլընմայաճաղընտան, հէր քիմ պուլմուշ իսէ թարիխի իրանան օն պէշ կիւնէ քատար նիզամիյէ մանհասէսինէ կէթիրմէսի վէ միւտաէթը մէգքիւրէ իսթիխամընտա զայէն օլարաք վիրիլէն մաղպաթա իւզէրինէ սուրէթի եաղըլաճաղը մանլիմ օլմաք իշիւն իրան օլընար։

8 ադօսթօս 1878

Պապը Սէրասքէրի

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՆԱԽԱՃԱՒԻՂ ԴԻՏՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻՑ

Աշխատասիրեաց Յակոբ Յ. Մկրտչեան

Ի տէր հանգուցեալ բարեյիշատակ սիրելի որդւոյս հեղինակած յիշեալ պատկերազարդ գրքոյկն՝ որ մասնաւորապէս վարժարանաց համար յօրինուած է, ապակեց առաջ ալի զրչպղինձ դրամի գնով կը ծախուէր թէպէտ, բայց մեռոյլ դրամոց օրըստ օրէ բարձրանալը նկատելով այսուհետև մէկ 10նոց թղթադրամի վաճառել որոշուած է՝ ի դիւրութիւն գնողաց։

Կեդրոնատեղին է գրավաճառ Պալտասար աղա Սրապեանի գրատունը՝ ի Մէրճան չարշը։ Ուրիշ Հայ գրավաճառաց քով ալ կը գտնուի։

Ազգային վարժարանաց համար սովորական գնէն զեղչ կըլլայ։

Յովհ. Խան. Մկրտչեան

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՏՈՄԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՊԱՐԶԵՒԿՐԿՆԱԿ—ՏՈՄԱՐ

Ոբ պարունակէ

Փոխանակագրի, Հաշուեցուցի, Բեռնագրի, Վարձագրի, Հաշուընթացի և այլոց ձևեր և օրինակներ

Ի ՊԷՏՍ ՎԱՐԺԱՐԱՆՑ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՑ

Ի Ն. Տէ-Գէնճեանէ

Տպագրեալ արդեամբք և ծախիւք Մեծ. Տիգրան էֆէնտի Գարակէօզեանի

Կեդրոնատեղին է Պօլիս Մէրճան չարշը թիւ 33 Սրապեան Պաղտասար աղայի գրատունը. Բերայ Մ. Վայսի գրատունը, և ուրիշ Հայ գրավաճառաց քով։

Դին կազմեալ օրինակին երեք քառորդ մէճիտ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՏԱՍԱՆ ԿՆՅԱՐԱՑ

Թարգմանեց Ե. Մ. Ս.

Սոյն պատմութեան երկրորդ և վերջին հատորն ալ Իզմիրի Տէտէեան եղբարց տպարանէն՝ ի լոյս ընծայուելով, կը ծախուի Եէնի ճամի Զիլինկիրլեր ճատէսի թիւ 2 Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Դին 1 ֆրանք 25 սանթիմ։

ՇԱՀԷՆՆ Ի ՍԻՊԻՐ

ԿԱՄ ԳԱՂԹԱԿԱՆ ՀԱՅ

Գրէց Ս. Տէր Սարգիսեանց

կը ծախուի ամեն Հայ գրավաճառաց քով։ Դին 2 1/2 ֆրանգ։

ՆՈՐ ԴԱՍԱԳՐՔԵՐ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Ա. ՄԱՍ

Հրատարակեց Գ. Մուրատեան

Ի Զմիւռնիա

Դպրոցներու մէջ գործածուելու համար ընտանի լեզուով գրուած, զբաղարճալի և միանգամայն հրահանգիչ դասագիրք մ'է։

Կը գտնուի Կ. Պոլսոյ Հայ գրավաճառաց քով։ Դին 35 սանթիմ։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԴԱՂԴԻԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑԱՑ ՀԱՄԱՐ

Հեղինակ

Լէ-ոէեն Լէ-էլէ

Աշխատասիրեաց Ա. Պիսկոռեան

Հեղինակէն հրամանաւ պարբերեցաւ

Սոյն գործնական քերականութիւնը Գաղղիոյ երկրորդական վարժարանաց նախապատրաստական կարգերուն համար ընդունուած ամենէն ընտիր և յարմարագոյն դասագիրքն ըլլալով, առարկոյս չկայ որ աղդային վարժարանաց մէջ ալ նոյն ընդունելութիւնը պիտի գտնէ։

Կը գտնուի Կ. Պոլիս Յ. Գալֆեան և այլ գրավաճառաց քով, և Բերա Մոսիւ Վէրսի գրանոցը։ Դին 12 ղ։



ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇԱԳԵՆԱՒՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1878 ՕԳՈՍՏՈՍ 1 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՉԵՒ ՕԳՈՍՏՈՍ 31

ԲՈՍՓՈՐԷՆ ԻԶՆՈՂ ՇԱԳԵՆԱՒՆԵՐԸ

Ժ-	Ե-	Ր-	Ղ-	Ե-	Ր-	Ե-	Ք-	Թ-
11	30					Եկնիմահալլէն Մէզարպ. Պէյիւքադէրէ, Թարապիա, Եկնիքէօյ, Սիմէնիա, Էմիրկ. Պոյաճ. Ր. Հիսար, Պէշիք.		34
12						Ր. և Ա. Գավաքէն Եկնիմ. Մէզար. Պէյիւքա, Թար. Եկնիք. Էմիրկ. Ր. Հիսար, Պէշիք. (Ուրբաթ օրերը ժամը 12 1/4 ին Արնավ. հանդիպելով)		28
1						Եկնիմահ. Մէզարպ. Պէյիւքա. Թարապ. Եկնիքէօյ. Սիմէն. Էմիրկ. Ր. Հիսար, Պէշիք, Արնավ. (Բացի ուրբաթէ)։		18
1	45					Եկնիմ. Մէզարպ. Պէյիւքա. Քիրէճալ. Թարապիա, Եկնիք. Էմիրկ. Պոյաճ. Ր. Հիսար, Պէշիք։		20
2	30					Եկնիմահալլէն Մէզարպ. Պէյիւքա. Թարապիա, Եկնիք. Էմիրկ. Ր. Հիսար, Պէշիք, Արնավ Գուբ. Պէյլեր. Օրթաք. Պէշիկ. (Ուրբաթ օրերը 2 3/4 ին)։		19
3	15					Մէզար. Պէյիւքա. Թարապ. Եկնիք. Էմիրկ. Պոյաճ. Ր. Հիսար, Պէշիք. Արնավ. Գուբուշ. Օրթաք. Պէշիկ։		34
4	15					Եկնիմ. Մէզարպ. Պէյիւքա. Թարապ. Եկնիք. Էմիրկ. Պոյաճ. Ր. Հիսար, Արնավ. Օրթաք. Պէշիկ։ (Ուրբաթ օրերը Գանդ.)		32
5	15					Եկնիմահ. Մէզար, Պէյիւքա. Թարապ. Եկնիք. Էմիրկ. Ր. Հիսար, Արնավ. Պէյլ. Օրթաք. Պէշիկ։		23
6	15					Եկնիմահալլէն Պէյիւքա. Թարապիա, Պէյքօզ, Եկնիքէօյ, Էմիրկ. Գանլըճա, Ր. և Ա. Հիսար, Գանտիլլի, Արնավ. Զէնկ. Պէյլեր. Օրթաքէօյ, Գուզկ. Պէշիկթաշ, Իսկիուսար։		1
8	15					Ր. և Ա. Գավազէն Եկնիմահ. Մէզար. Պէյիւք. Թարապիա, Պէյքօզ, Եկնիք. Էմիրկէն, Պոյաճ. Ր. Հիսար, Պէշիք, Արնավ. Գուբուշ. Օրթաքէօյ, Պէշիկթաշ։		20
10	15					Մէզարպուրնուէն Պէյիւքա. Թարապիա, Եկնիքէօյ, Էմիրկէն, Ր. Հիսար, Արնավ. Օրթաքէօյ, Պէշիկթաշ։		22

Աբնավուտ էջէն

Ժ-	Ե-	Ր-	Ղ-	Ե-	Ր-	Ե-	Ք-	Թ-
11	30					Արնավուտքէօյէն, Գուբուշ. Օրթաք. Պէշիկթաշ։		2
12						Պէշիքէն Արնավուտ. Գուբ. Օրթաք. Պէշիկ.		22
12	30					Արնավ. Գուբուշ. Օրթաք. Պէշիկ. Գապաթաշ։		23
1						Արնավուտքէօյէն, Գուբուշ. Օրթաք. Պէշիկթաշ։		2
1	35					Արնավուտքէօյէն, Գուբուշ. Օրթաք. Պէշիկթաշ։ Գապաթաշ։		22
2						Արնավ. Գուբուշ. Օրթաք. Պէշիկթաշ, Գապաթ։		23
2	30					Արնավ. Գուբ. Օրթաք. Պէշիկ. Գապաթաշ։		28
10						Արնավուտքէօյէն ուղղակի կամուրջ։		23
10	45					» » »		1

Առէոկոն էջէր

Ժ-	Ե-	Ր-	Ղ-	Ե-	Ր-	Ե-	Ք-	Թ-
11	30					Պէյքօզ, Բաշապ. Գանլըճա, Ա. Հիսար, Գանտիլլի, Վանիքէօյ. Զէնկէյքէօյ, Պէյլերպէյ, Գուզկ.		21
11	30					Վանիքէօյէն Զէնկէյ. Պէյլեր. Գուզկ. Գապ։		1
12	15					Պէյիւքա. Թարապիա. Պէյքօզ, Բաշպ. Ր. Փ. մահ. Գանլ. Ա. Հիսար, Վանիք. Զէնկէյ. Պէյլեր. Գուզկ.		32
1	30					Պէյիւքա. Պէյքօզ, Բաշապ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Զէնկ Պէյլ. Գուզկ. (Ուր. օրերը ժամ 2ին)։		17
3	30					Ր. և Ա. Գավաքէն Մէզարպ. Պէյքօզ, Ր. Պահճէ, Ր. մ. մահ. Սիմէն. Գանլ. Պոյաճ. Ր. Հիսար, Պէպէք, Պէյլ. Վանիք. Սիրքէճի. (Բացի ուրբաթէ)։		21
3	30					Պէյքօզ, Բաշապահ. Ր փաչա մահալլէսի, Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք. Զէնկ. Պէյլ. Գուզկ. Գապ. (Բացի ուրբաթէ)։		2
9						Պէյիւքա. Պէյքօզ, Բաշապ. Գանլըճա, Ա. Հիսար, Գանտ. Վանիք Զէնկէյլ. Պէյլերպէյ, Գուզկ. Իսկ. (Ուրբաթ օրերը Ր Փ. մահ.)		19
9	45					Վանիքէօյէն ուղղակի կամուրջ։ (Բացի ուրբաթէ)։		2

ԿԱՄՈՒՐՋԷՆ ԵԼՆՈՂ ՇՈՒԳԵՆԱՒՆԵՐԸ

Ե-ր-ե-կ-ն Եկէր

Ժ-	Ե-	Ր-	Ղ-	Ե-	Ր-	Ե-	Ք-	Թ-
1						Պէշիկ. Օրթաք. Արնավ. Ր. Հիսար, Էմիրկէն, Եէնիք. Թարապիա, Պէյիւքա. Մէզարպ. Ր. և Ա. Գավազ։ (Ուրբաթ օրերը Գավազները չերթալով Եէնիմահ)։		21
12	45					Գապ. Իսկ. Պէշիկ. Գուզկ. Օրթ. Պէյլ. Զէնկ. Արնավ. Գանտ. Ա. և Ր. Հիսար, Գանլը Էմիրկէն, Եէնիք. Պէյքօզ, Թարապ. Պէյիւք. Եէնիմահ։		1
1	45					Պէշիքթ. Օրթաք. Արնավ. Պէպէք. Ր. Հիսար, Պոյաճ. Պէյքօզ, Թարապ. Պէյիւք. Եէնիմահ։		34
3	15					Պէշիկ. Օրթաք. Գուբուշ. Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Էմիրկ. Եէնիք. Թար. Պէյիւք. Եէնիմ։		23
5						Պէշիկ. Օրթաք. Արնավ Ր. Հիսար, Էմիրկ. Եէնիք. Պէյքօզ, Թարապ. Պէյիւքադէրէ, Մէզարպ. Ր. և Ա. Գավազ։		20
6	30					Իսկ. Պէշիկ. Գուզկ. Օրթաք. Պէյլ. Զէնկ. Արնավ. Գանտ. Ր. Հիսար, Պոյաճ. Եէնիք. Թար. Պէյիք։		19
8						Պէշիկ. Օրթաք. Արնավ. Ր. Հիսար, Էմիրկ. Եէնիք. Թարապ. Պէյիւքա. Մէզարպուրնու։		22
9	30					Պէպէք, Ր. Հիսար, Էմիրկ. Սիմէն. Եէնիք. Թար. Պէյիք. Մէզ. Եէնիմ։ (Ուրբաթ օրերը ժամ 10ին Քիրէճալ.)։		34
10	15					Պէպէք, Ր. Հիսար, Պոյաճ. Եէնիք. Թարապ. Քիրէճալ. Պէյիւք Մէզար. Եէնիմահ։ (Բացի ուրբաթէ)։		32
10	40					Պէշիկ, Օրթաք Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Էմիրկ. Եէնիք. Թարապ. Պէյիւքա. Մէզարպ. Եէնիմ։		18
11	15					Պէպէք, Ր. Հիսար, Պոյաճ. Էմիրկ. Եէնիքէօյ, Թարապիա, Պէյիւքա. Մէզարպ. Եէնիմահալլէ։		20

Արնավուտ էջէր

Ժ-	Ե-	Ր-	Ղ-	Ե-	Ր-	Ե-	Ք-	Թ-
12	30					Ուղղակի Արնավուտքէօյ։		2
1						» »		22
1	30					» »		23
1	45					» »		28
9	15					Գապաթաշ, Պէշիկթաշ, Օրթաք. Գուբուշ. Արնավ.		23
10						Գապաթաշ, Պէշիկթաշ, Օրթաք. Գուբ. Արնավ.		1
11	5					Գապաթ. Պէշիկ. Օրթաք. Գուբուշ. Արնավ։		23
11	35					Պէշիկթաշ, Օրթաք. Գուբուշ. Արնավ։		1
12						Պէշիկթաշ, Օրթաք. Գուբուշ. Արնավուտ. Պէպէք։		22

Առէոկոն էջէր

Ժ-	Ե-	Ր-	Ղ-	Ե-	Ր-	Ե-	Ք-	Թ-
2	15					Պէշիքթ. Օրթաք. Ր. Հիսար, Էմիրկ. Պէյքօզ։ (Բացի ուրբաթէ)։		2
2	30					Իսկ. Գուզ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Բաշապ. Պէյքօզ, Պէյիւքա. Եէնիմահ. (Ուրբաթ օրերը Ր Փ. մահ.)		32
9						Գուզկ. Պէյլ. Զէնկ, Վանիք. (Բացի ուրբաթէ)։		2
9	30					Գուզկ. Պէյլերպ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Բաշապ. Պէյքօզ, Պէյիք. Մէզ. Ր և Ա Գավաքներ։		28
10	15					Ետքը Սիրքէճիէն Պէյլեր Վանիք. Պէպէք Ր. Հիսար, Պոյաճ. Գանլ. Սիմէն. Ր. փաչա մահ. Բաշ. Պէյքօզ։ (Բացի ուրբաթէ)։		21
10	30					Գապաթ. Գուզկ. Պէյլ. Զէնկ. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Ր. փաչա մահ. Բաշ. Պէյքօզ, Թար. Պէյիք.		17
11	15					Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Բաշապ. Պէյքօզ, Պէյիքադէրէ		20
11	40					Գապաթ. Գուզկ Պէյլ. Զէնկ. Վանիք. Արնավ։		2



ՋՐՀԱՆ

Ամերիկայի ջրհանները մեծ և փոքր, երկաթէ հատատուն խողովակներով՝ թէ ջրշեղջներու և թէ խորունկ հորերու համար ածան գներով կը ծախուի, Կ. Պոլիս Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղազան։

ԿԱՐԻ ԳՈՐԾԻՔ

Փոքր «վանձէր» կոչուած ձեռքով դարձող ու անքակ կար կարող գործիքը ամեն տեսակ կար մեծ դիւրութեամբ կը կարէ ու գինն ալ աժան է, երաշխաւորութեամբ կը տրուի, աւրուածները կը շակուի ու կարել չդիտցողին դաս կը տրուի. կը ծախուի Կ. Պոլիս Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղազան։

ՍՈՒԹԻՆԿ ՇԻՐՕՐ

Ցայսանի էսք երախայք ծնանելէն մինչ երեք տարեկան հասակը գրեթէ շարունակ փորի ցաւ. փորհարութիւն, ստամոքսի անհանգստութիւն, անքուն մնալ, ջղային գրգռութիւն ևայլն կունենան, մանաւանդ ակռա հանելու միջոցին, և այս նեղութիւններն ալ աւելի կը սատկանան ամառուան տաք եղանակին։ Սութինկ Շիրօրը վերոյիշեալ դժուարութեանց ամենուն ալ առաջքը կառնէ ու կը բժշկէ, որով երախան կը հանգչի ու կը զօրանայ յուրախութիւն մեծ իւր ծնողաց։ Գործածողները շատ գոհ են։ Ուղղը կրնայ փորձել. գինն աժան է. նորածին երախայից կաթիլով կը տրուի, վեց ամիսէն վեր եղողին օրը երեք անուշի դրգալ. կը ծախուի Կ. Պոլիս Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղազան։

Այս լրագիրը չաբաթը երեք անգամ կը հրատարակուի, երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը։ Բաժանորդագրութեան տեղերն են Ղալաթիա Սանտրքճիլար ճատտէսի թիւ 198, Գօրս խան Մուսիսի խմբագրատունը։

Իսկ գաւառաց մէջ հեռաւոր հոգաբարձուաց սենեակները։

ԻԶՄԻՐ. Սարգիս աղա Տէտէեան.
ՆԻԿՈՄԻԴԻԱ. Խոսրով էֆ. Լսկիճեան.
ՊՐՈՒՍԱ. Սահակ աղա Թանկէրեան.
ԹԷՔԻՐՏԱՂ. Տ. Արիստակէս աւագ քահանայ Ֆէտլեան.
ՏՐԱՊԻԶՈՆ. Խաչատուր աղա Լիմաճեան
ԿԱՐԻՆ. Կարապետ պատուելի Զարբարեան.
ՎԱՆ. Կարապետ աղա Նաթանեան.
ՄՈՒՇ. Մկրտիչ աղա Փոթիկեան
ԵԱՇ. Մ. աղա Խաչիկեան
ՖՈՒՇԱՆ. Ֆէրհատ աղա Ֆէրհատեան
ԵՐԶՆԿԱՑ. Թադէոս աղա Բաղրատունի.
ՍԻՎՐԻՀԻՍԱՐ. Արժ. Գարեգին.
Ուրիշ քաղաքներէ ստանալիք լրագրոցներն ստանալու տեղերէն անկախ [illegible] թղթակցիներ։

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ
Կ. Ս. ԻՒԹԻՒՃԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ
Ղալաթիա, Նօրօ խան